

## ԺՈՒՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-3104, ԳՅՈՒՄՐԻ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 96, ՀԵՌԱՆՈՍ՝ 0312 30622

## JOURNALISTS' CLUB "ASPAREZ"

NON-GOVERNMENTAL ORGANIZATION

POUSHKIN STREET 96, GYUMRI, ARMENIA 3104, TEL: (0132 30622)

Email: [info@asparez.am](mailto:info@asparez.am) [www.asparez.am](http://www.asparez.am)

ՀԱՅ-Հայաստան Ծրագրի ՊՈԱԿ-ի տնօրեն Արա Յովսեփյանին  
ՀԱՅ-Հայաստան Ծրագրի Շահառուների խորհրդի անդամներին  
ՀԱՅ-Հայաստան Ծրագրի Շե անդամ Լեւոն Բարսեղյանից

### ՆԱՍՏԿ

Հարգելի տիկնայք եւ պարոնայք,

Անցած մի քանի ամիսներին, ուսումնասիրելով ՀԱՅ-Հայաստան ծրագրի ճանապարհաշինության մանրամասները, այդ մանրամասները քննարկելով ձեզ եւ ծրագրի մի մեծ խումբ շահառուների հետ (գյուղացիներ, գյուղապետեր, համայնքների ավագանիների անդամներ, ճանապարհաշինարարության մասնագետներ եւ այլն), հանգեցի այն եզրակացության, որ մի քանի հարցեր լրացուցիչ պարզաբանումների եւ գուցե վերանայումների կարիք ունեն: Այս նամակով ես կիսում եմ ձեզ հետ իմ մտահոգություններն ու այն հարցերը, որոնք պատասխանների կարիք ունեն, միեւնույն ժամանակ առաջարկում եմ ՀԱՅ-Հայաստան Շե նիստ հրավիրել, հրավիրել այդ նիստին ՀԱՅ-Հայաստան ՊՈԱԿ-ի ղեկավարներին եւ համապատասխան պաշտոնյաներին ու համատեղ քննարկման, հարցուպատասխանի միջոցով փորձել գտնել պատասխաններն այն հարցերի, որոնք նկարագրում եմ ստորեւ:

### 1.

Հայտնի է, որ ՀԱՅ-Հայաստան ծրագրի միջոցներով պլանավորած է նորոգել եւ/կամ վերականգնել 943 կմ համայնքային ճանապարհ: Ինձ, գործընկերներիս եւ հանրությանը տրամադրվել է այդ ճանապարհների ցանկը: Տեղյակ ենք նաեւ, որ ՀՀ Կառավարությունը որպես սեփական ներդրում այս ծրագրի շրջանակներում ստանձնել է 550 կմ-ից ավելի համայնքային (կամ միջհամայնքային ճանապարհ) նորոգելու կամ վերականգնելու պարտավորություն: Ծրագրի արդյունավետության համար ավելի որակյալ կարծիք կազմելու եւ ծրագրի ուղղակի շահառու-

ների հարցերին ավելի հստակ պատասխանելու համար, կարծում եմ արժե, որ մեզ տրամադրվի այդ 550 կմ ճանապարհների հատվածների ցանկն, այնպես, ինչպես տրամադրվել է ՀԱՀ-Հայաստան ծրագրի միջոցներով սորոգվելիք 943 կմ ճանապարհների ցանկը: Այսպիսով. **հարց**. Կա՞ր արդյոք որպես ՀԱՀ-Հայաստան ծրագրի ներդրում ՀՀ միջոցներով մոտ 550 կմ համայնքային սորոգվելիք ճանապարհների ցանկ-ցուցակը: Եթե կա նման ցուցակ, ինչպե՞ս կարելի է այն ստանալ: Եթե նման ցուցակ դեռ չկա, ո՞վ է այն կազմելու:

## 2.

Հայտնի է, որ ՀԱՀ-Հայաստան ծրագրի նախնական մշակման ընթացքը զուգահեյակել է «Լինսի» հիմնադրամի միջոցներով ՀՀ մի քանի ճանապարհների սորոգման պլանավորմանը, ու, իմ ունեցած տեղեկություններով, ՀԱՀ-Հայաստան ծրագրի նախնական պլանավորմամբ սորոգման նախատեսված մի քանի ճանապարհատվածներ կրկնվում են արդեն շինարարությունն իրականացնող «Լինսի» հիմնադրամի պլանավորած մի քանի ճանապարհատվածների հետ: Այսպես.

### Շիրակի մարզի մասով.

#### Աղյուսակ թիվ 1.

Զարգացնող ՀԱՀ-Հայաստան ծրագրի ճանապարհաշինության նախնական պլանից մեզ տրամադրված փաստաթղթից: Շիրակի մարզի մասով.

	Ճանապարհատվածը			Մեծիկ	Երկարությունը	հաղորդակցվող համայնքների թիվը	շահառու բնակչությունը	Հաղորդակցությունը եւ հատվածները
	<b>Ընդամենը Շիրակի մարզով</b>				<b>177</b>	<b>48</b>	<b>65,353</b>	
84	Շիրակ	Ախուրյան	Առափի-Մ7	С	2	1	1751	
80	Շիրակ	Ախուրյան	Այգաբաց-Գյումրի	С	10	3	2230	Այգաբաց-Ար-իկ (5կմ, С)-Գյումրի (5կմ, С)
79	Շիրակ	Ախուրյան	Բայանդուր-Մ1	С	9.5	4	6549	Բայանդուր-Գետք (4կմ, С)-Ղարիբջանյան (2կմ, С)-Ազատան (3կմ, С)-M1 (0,5կմ, С)
81	Շիրակ	Ախուրյան	Ջրառատ-Գյումրի	С	18	5	11125	Ջրառատ-Մուսայելյան (4կմ, С)-Կառնուտ (6կմ, С)-Ախուրյան (5կմ, С)-Գյումրի (3կմ, С)
82	Շիրակ	Ախուրյան	Կամո-Մ7	С	3	1	1350	
78	Շիրակ	Ախուրյան	Ոսկեհասկ-Մ7	С	1	1	1816	
68	Շիրակ	Ամասիա	Արեգնաղեմ-Գյումրի	С	22	4	1621	Արեգնաղեմ-Գյուլիբուլաղ (7կմ, С)-Ողջի (5կմ, С)-Գյումրի (10կմ, С)
66	Շիրակ	Ամասիա	Ողջի-Մ1	С	29	8	1792	Ողջի-Շաղիկ (4կմ, С)-Գառնառիճ (2կմ, С)-Շաղկուտ (3կմ, С)-Չորակերտ (3կմ, С)-Արդենիս (6կմ, С)-Աղվորիկ (4կմ, С)-Թավշուտ (6կմ, С)-M1 (1կմ, С)

74	Շիրակ	Անի	Անիպեմգա-Մարալիկ	C	33	5	2622	Անիպեմգա-Բագրավան (7կմ, C)-Սարակապ (13կմ, C)-Քարաբերդ (8կմ, C)-Մարալիկ(5կմ, C)
75	Շիրակ	Անի	Իսահակյան-Մ1	C	11	4	2210	Իսահակյան-Լուսաղբյուր (4կմ, C)-Նորաբերդ (4կմ, C)-Գուսանագյուղ (2կմ, C)-M1 (1կմ, C)
70	Շիրակ	Արթիկ	Գեղանիստ-Յոռոմ	C	10	5	5767	Գեղանիստ-Սպանդարյան (4կմ, C)-Փանիկ (3կմ, C)-Նոր Կյանք (2կմ, C)-Յոռոմ (1կմ, C)
73	Շիրակ	Արթիկ	Լեռնակերտ-Մ1	C	11	2	3769	Լեռնակերտ-Պեմգաշեն (3կմ, C)-M1 (8կմ, C)
69	Շիրակ	Արթիկ	Մեծ Մանթաշ-Մ1	C	17.5	5	22751	Մեծ Մանթաշ-Փոքր Մանթաշ (0,5կմ, C)-Սարալանջ (3կմ, C)-Արթիկ (4կմ, C)-Յոռոմ (7կմ, C)-M1 (3կմ, C)
<b>Ճանապարհահատվածը</b>				Շրջան	<b>երկարությունը</b>	<b>հաղորդակցվող համայնքների թիվը</b>	<b>շահառու բնակչությունը</b>	<b>Հաղորդակցությունը եւ հատվածները</b>
<b>Ընդամենը Շիրակի մարզով</b>					<b>177</b>	<b>48</b>	<b>65,353</b>	

### Քարտեզ թիվ 1.

Զաղվածք ՀԱՀ-Հայաստան Ծրագրի մշակման աշխատանքային խմբից մեզ տրամադրված քարտեզից: Դրանում ՀԱՀ-Հայաստան ծրագրով Նորոգման համար պլանավորած ճանապարհները սեւ են ներկված:



- ա) 1-ին աղյուսակի 74-րդ տողի ճանապարհահատվածներից Անիպեմզա-Բագրավան-Սարակապ հատվածների (20 կմ) մեծ մասը՝ մոտ 17 կմ, կրկնում է «Լինսի» հիմնադրամի միջոցներով վերակառուցվող-վերակառուցվելիք Գյումրի-Արմավիր H-17 ավտոճանապարհը:
- բ) 1-ին աղյուսակի 75-րդ տողի ճանապարհահատվածներից Իսահակյան-Լուսաղբյուր-Նորաբեր(Շիրակավան)-Գուսանազյուղ-M-1 հատվածներն (11 կմ) ամբողջությամբ կրկնում են «Լինսի» հիմնադրամի միջոցներով վերակառուցվող-վերակառուցվելիք «Գյումրի-Արմավիր» H-17 ավտոճանապարհի եւ «H-17---Ալազյազ-M-3» H-21 ավտոճանապարհների հատվածները:
- գ) 1-ին աղյուսակի 70-րդ տողի ճանապարհահատվածներից Նոր կյանք-Յոզմ հատվածն (1կմ) ամբողջությամբ կրկնում է «Լինսի» հիմնադրամի միջոցներով վերակառուցվող-վերակառուցվելիք «H-17-Ալազյազ» H-21 ավտոճանապարհի մի հատվածը:
- դ) 1-ին աղյուսակի 69-րդ տողի ճանապարհահատվածներից Մեծ Մանթաշ-Փոքր Մանթաշ-Սարալանջ-Արթիկ-Յոզմ-M-1 հատվածներն (17,5կմ) ամբողջությամբ կրկնում են «Լինսի» հիմնադրամի միջոցներով վերակառուցվող-վերակառուցվելիք «H-17-Ալազյազ» H-21 ավտոճանապարհի մի հատվածը:

**Այսպիսով ստացվում է, որ միայն Շիրակի մարզում ՀԱՀ-Հայաստան ծրագրի ճանապարհաշինության պլանը «կրկնում է» «Լինսի» հիմնադրամի պլանավորած ընդհանուր (ա+բ+գ+դ) 46,5 կմ ճանապարհահատվածներ: Դա կազմում է ՀԱՀ-Հայաստան Ծրագրով Շիրակի մարզում պլանավորված վերականգնվելիք կառուցվելիք 177կմ ճանապարհների 26,27%-ը:**

**Լոռու մարզի մասով.**

**Աղյուսակ թիվ 2.**


Զաղվածք ՀԱՀ-Հայաստան ծրագրի ճանապարհաշինության նախնական պլանից մեզ տրամադրված փաստաթղթից: Լոռու մարզի մասով.

Ճանապարհահատվածը				Մեծի	Երկարու- թյունը	հաղորդակցվող համայնքների թիվը	շահառու բնակչու- թյունը	Հաղորդակցությունը եւ հատվածները
<b>Ընդամենը Լոռու մարզով</b>					<b>118</b>	<b>40</b>	<b>34,528</b>	
43	Լոռի	Գուգարք	Անտառամ ուտ-Մ6	С	6	2	1578	Անտառամուտ- Վահագնի (5կմ, С)-M6 (1կմ, С)
42	Լոռի	Գուգարք	Գյուլլիդար ա-Մ3	С	16	6	4227	Գյուլլիդարա-Քիլիսա (2կմ, С)-Հալավար (2կմ, С)-Հայդարի (2կմ, С)-Լեռնապատ

								(4կմ, C)-Դարպաս (5կմ, C)-M3 (1կմ, B)
56	Լոռի	Սպիտակ	Ծաղկաբեր-Մ7	C-B	7	2	3164	Ծաղկաբեր-Մեծ Պարսի (4կմ, C)-M7 (3կմ, B)
57	Լոռի	Ստեփանավան	Կաթնաղբյուր-Ստեփանավան	C	13	4	1709	Կաթնաղբյուր-Ուրասար (6կմ, C)-Արմանիս (3կմ, C)-Ստեփանավան (4կմ, C)
59	Լոռի	Ստեփանավան	Կողես-Մ3	C	12	4	2370	Կողես-Յաղդան (3կմ, C)-Ազարակ (3կմ, C)-M3
60	Լոռի	Ստեփանավան	Կուրթան-Գյուլագարակ	C	5	3	2220	Կուրթան-Վարդաբլուր (3կմ, C)-Գյուլագարակ (2կմ, C)
58	Լոռի	Ստեփանավան	Սվերդլով-Մ3	C	9.45	2	2079	Սվերդլով-Ուռուտ (2կմ, C)-M3 (6կմ, C)
63	Լոռի	Տաշիր	Միխայլովկա-Մ3	C	1	1	737	
62	Լոռի	Տաշիր	Պաղաղբյուր-Մ3	C	14	3	5191	Պաղաղբյուր-Չյունաշող (6կմ, C)-Մեծավան (3կմ, C)-M3 (5կմ, C)
64	Լոռի	Տաշիր	Սարչապետ-Մ3	C	8.5	2	3352	Սարչապետ-Նորաշեն(3կմ, C)-M3 (2կմ, C)
49	Լոռի	Թումանյան	Աթան-Յ22	C	7	2	723	Աթան-Շամուտ (4կմ, C)-Յ22 (3կմ, C)
47	Լոռի	Թումանյան	Չկալով-Մ6	C	6	2	2715	Չկալով-Դսեղ (5կմ, C)-M6 (1կմ, C)
53	Լոռի	Թումանյան	Ճոճկան-Փոքր Այրում	C	4	3	2347	Ճոճկան-Մեծ Այրում (1կմ, C)-Փոքր Այրում(3կմ, C)
50	Լոռի	Թումանյան	Լորուտ-Յ22	C	2	1	1109	
52	Լոռի	Թումանյան	Վերին Ախթալա-Ախթալա	C	7	3	1007	Վերին Ախթալա-Փոքր Այրում (5կմ, C)-Ախթալա (2կմ, C)
<b>Ճանապարհահատվածը</b>				<b>Ենթակ</b>	<b>երկարությունը</b>	<b>հաղորդակցվող համայնքների թիվը</b>	<b>շահառու բնակչությունը</b>	<b>Հաղորդակցությունը եւ հատվածները</b>
<b>Ընդամենը Լոռու մարզով</b>					<b>118</b>	<b>40</b>	<b>34,528</b>	

## Քարտեզ թիվ 2.

Քաղվածք ՀԱՀ-Հայաստան Ծրագրի մշակման աշխատանքային խմբից մեզ տրամադրված քարտեզից: Դրանում ՀԱՀ-Հայաստան ծրագրով նորոգման համար պլանավորած ճանապարհները սեւ են ներկված:



ա) 2-րդ աղյուսակի 59-րդ տողի ճանապարհահատվածներից Կողես-Յաղդան (Եղիտանք)-Ագարակ-Լոռի Բերդ (Լոռի Բերդը աղյուսակում բաց է թողնված)-M-3 հատվածները (12 կմ) կրկնում են «Լինսի» հիմնադրամի միջոցներով վերականգնվող-վերականուցվելիք «M-3---H-35» ավտոճանապարհի մի հատվածը:

**Այսպիսով ստացվում է, որ Լոռու մարզում ԶՄՅ-Հայաստան ծրագրի ճանապարհաշինության պլանը «կրկնում է» «Լինսի» հիմնադրամի պլանավորած 12 կմ ճանապարհահատված: Դա կազմում է ԶՄՅ-Հայաստան Ծրագրով Լոռու մարզում պլանավորված վերականգնվելիք կառուցվելիք 118 կմ ճանապարհների 10,1%-ը:**

**Արագածոտնի մարզի մասով.**

**Աղյուսակ թիվ 3.**

Քաղվածք ԶՄՅ-Հայաստան ծրագրի ճանապարհաշինության նախնական պլանից մեզ տրամադրված փաստաթղթից: Արագածոտնի մարզի մասով.

Ճանապարհահատվածը				Մեծիկ	երկարությունը	հաղորդակցվող համայնքների թիվը	շահառու բնակչությունը	Հաղորդակցությունը եւ հատվածները
<b>Ընդամենը Արագածոտնի մարզով</b>					<b>89</b>	<b>31</b>	<b>35,136</b>	
8	Արագածոտն	Ապարան	Ձորագուլուխ-Ապարան	C	11	5	1833	Ձորագուլուխ-Թթուջուր (2 կմ, C)-Վարդենիս (4 կմ, C)-Մուլքի (4 կմ, C)-Ապարան (1 կմ, C)
7	Արագածոտն	Ապարան	Վարդենուտ-Մ3	C	3.5	2	2453	Վարդենուտ-Շենավան (2 կմ, C)-M3 (1 կմ, C)
2	Արագածոտն	Արագած	Հնաբերդ-Ամրեթագա	C	3	3	2777	Հնաբերդ-Գեղածոր (2 կմ, C)-Ամրեթագա (1 կմ, C)
<b>1</b>	Արագածոտն	Արագած	Նորաշեն-Գեղադիր	C	2	1	965	Նորաշեն-Գեղադիր (2 կմ, C); Ամրեթագա; Սանգյառ, Այգյազ
3	Արագածոտն	Արագած	Ծաղկահովիտ-Սանգյառ	D	2	1	1562	
5	Արագածոտն	Աշտարակ	Անտառուտ-Մ1	C	8	3	5721	Անտառուտ-Բյուրական (1 կմ, B)-Ագարակ (6 կմ, C)-M1 (1կմ, C)
6	Արագածոտն	Աշտարակ	Վերին Սասունիկ-Մ1	C	9.5	2	2022	Վերին Սասունիկ-Սասունիկ (9կմ, C)-M1 (0,5կմ, B)
12	Արագածոտն	Թալին	Բայսո-Մ1	C	6	3	2409	Բայսո-Կաքավաձոր (1կմ, C)-Ներքին Բազմաբերդ (4կմ, C)-M1 (1կմ, B)
11	Արագածոտն	Թալին	Գառնահովիտ-Մ1	C	9	4	3427	Գառնահովիտ-Չովասար (2կմ, C)-Ձորագյուղ (4 կմ, C)-Մաստարա (2կմ, C)-M1 (1կմ, C)
10	Արագածոտն	Թալին	Լեռնագոգ-Քարակերտ	C	9	3	3431	Լեռնագոգ-Դալարիկ (3կմ, C)-Քարակերտ (6կմ, C)
<b>9</b>	Արագածոտն	Թալին	Թլիկ-Մ9	C-B	26	4	8536	Թլիկ-Գետափ (4կմ, C)-Արագած (7կմ, C)-Արտենի (8կմ, B)-M9 (7կմ, B)




միջոցներով վերակառուցվող-վերակառուցվելիք H-21 (Գյումրի-Արմավիր) ավտոճանապարհի մի հատվածը:

Այսպիսով ստացվում է, որ Արագածոտնի մարզում ՀԱՀ-Հայաստան ծրագրի ճանապարհաշինության պլանը «կրկնում է» «Լինսի» հիմնադրամի պլանավորած 28 կմ ճանապարհահատվածներ (ա + բ): Դա կազմում է ՀԱՀ-Հայաստան Ծրագրով Արագածոտնի մարզում պլանավորված վերականգնվելիք կառուցվելիք 80 կմ ճանապարհների (ենթադրաբար տեխնիկական վրիպման պատճառով Արմավիրի մարզում նորոգման նախատեսված Քարակերտ-Դալարիկ-Լեռնագոգ 9 կմ հատվածը հաշվարկված էր Արագածոտնի մարզում, այդ պատճառով 3-րդ աղյուսակում նորոգվելիք ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմել է 89) 35 %-ը:

### Արմավիրի մարզի մասով.

#### Քարտեզ թիվ 5.

Քաղվածք ՀԱՀ-Հայաստան Ծրագրի մշակման աշխատանքային խմբից մեզ տրամադրված քարտեզից: Դրանում ՀԱՀ-Հայաստան ծրագրով նորոգման համար պլանավորված ճանապարհները սեւ են ներկված:



ա) Արմավիրի մարզում գտնվող Քարակերտ-Դալարիկ 6 կմ ճանապարհահատվածը կրկնում է «Լինսի» հիմնադրամի միջոցներով վերակառուցվող-վերակառուցվելիք H-17 (Գյումրի-Արմավիր) ավտոճանապարհի մի հատվածը, մեզ տրամադրված աղյուսակում, սխալմամբ հաշվել է Արագածոտնի մարզի բաժնում: Արմավիրի մարզում

պլանավորված ճանապարհաշինությունը 26 կմ փոխարեն իրականում կազմում է 35 կմ, որից 17,1% կրկնում է Լինսի ծրագրով պլանը:



Ամփոփելով 4 մարզերում դիտված ՅՄՅ-Յայաստան եւ «Լինսի» հիմնադրամի ճանապարհաշինական պլանային կրկնությունները, ստացվում է.

#### Աղյուսակ թիվ 4.

Տարածքներ	ՊԼԱՆԱՎՈՐԱԾ ՅՄՅ-Յայաստան ճանապարհաշինական		ԿՐԿՆՎՈՂ Լինսի Հիմնադրամի պլանների հետ կրկնվող ճանապարհների մասով	
	կմ	մլն դոլար	կմ	միջին՝ համամասնական մլն դոլար
Յայաստան	943	52,4	92,5	5,13
Շիրակի մարզ	177	11,8	46,5	3,10
Լոռու մարզ	118	6,4	12	0,65
Արագածոտնի մարզ	80	6,4	28	2,24
Արմավիրի մարզ	35	2,3	6	0,39
Ընդամենը՝ 4 մարզով	410	26,9	92,5	6,38

Ստացվում է, որ տարբեր հաշվումներով տնտեսվելու է 5,13-6,38 միլիոն դոլար: Չեմ բացառում վերը բերված հաշվարկների մեջ որոշակի անճշտությունները: **Յետաքրքիր է՝ ի՞նչ ուղղությամբ են ծախսվելու այդ միջոցները, չարժե՞, ճանապարհային շինարարության տնտեսելիք միջոցները ուղղել այլ անմխիթար ճանապարհների շինարարության կամ լրացուցիչ ջրաշինարարության համար:** Կարծում եմ սա քննարկման արժանի խնդիր է:

### 3.

Շիրակի մարզում 2007 հունվարին Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոնի կազմակերպած, ՅՄՅ-Յայաստան ՊՈԱԿ-ի պաշտոնյաների մասնակցությամբ քննարկումից, եւ 2006 մարտ-2007 փետրվար ժամանակահատվածում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՅԿ կազմակերպած մի շարք իրազեկման միջոցառումներից հետո ծրագրի ուղղակի շահառուներից մի քանի տասնյակ հարցեր եմ ստացել, որոնց՝ մեր ունեցած տեղեկությունների շրջանակներում հնարավորինս սպառնիչ պատասխաններ եմ տվել, բոլոր անհրաժեշտ դեպքերում հետաքրքրվածներին (մարզպետարանի պաշտոնյաներ, գյուղապետեր, գյուղացիներ, լրագրողներ, ջրաշինարարներ) տրամադրել եմ ՅՄՅ-Յայաստան ծրագրի՝ մեզ մոտ առկա նյութերի պատճենները, ՊՈԱԿ-ի աշխատակազմի կոնտակտային տվյալները եւ այլն:

Հառիճի գյուղապետ Ռուլանդ Նազարեթյանի մի քանի բանավոր հարցումներից հետո ստացել եմ գրավոր մի նամակ-խնդրանք, որում մասնավորաբար ասվում է «... Պետք է միայն տեսնել, թե ինչպես, զբոսաշրջիկները Հառիճավանքից ստացած լավագույն տպավորությունների հետ, իրենց դժգոհությունն արտահայտում ճանապարհների անմխիթար վիճակի կապակցությամբ, որը պատիվ չի բերում ինչպես համայնքին, այնպես էլ Հանրապետությանը: «Լինսի» հիմնադրամի միջոցներով նախատեսված Հոռոմ-Ալագյազ ճանապարհի վերակառուցման աշխատանքների հետ, ծրագրում նախատեսված Էր Նաեւ Հառիճավանք տանող ճանապարհի 1,5 կմ երկարությամբ հատվածի նորոգման աշխատանքները: Առկա են նախագծա-նախահաշվային փաստաթղթերը: Սակայն գների թանկացման (ենթադրաբար՝ շինանյութի-Լ.Բ.) պատճառով այս ճանապարհի վերանորոգումը հանվել է ծրագրից: Հառիճի հասարակությունը եւ գյուղապետարանը խնդրում է ձեր անձնական միջամտությունը ... Հազարամյակի մարտահրավերներ ծրագրով ճանապարհների վերանորոգման ծրագիր ընդգրկելու համար: ...»

Այս խնդրանքը, թեպետ գրված է ինձ, իմ խոր համոզմամբ ուղղված է Շահառուների խորհրդին եւ ՊՈԱԿ-ին ընդհանրապես:

### **Հարգելի Ա.Հովսեփյան եւ ՀՄՀ Շահառուների խորհրդի անդամներ,**

Հաշվի առնելով իմ այս նամակի առաջին երկու հարցերում շարադրվածը, կարելորելով Հառիճ համայնքի ու հուշարձանային համալիրի մատչելիության շահերը, ի նկատի ունենալով ՀՄՀ-Ծրագրի այն գերակա պայմանը, թե ծրագրի իրականացման արդյունքում (ներառյալ ՀՀ ճանապարհաշինական ներդրումը) Հայաստանի բոլոր համայնքները պիտի առնվազն մեկ բարեկարգ ավտոճանապարհային ելք ունենան դեպի միջպետական կամ հանրապետական նշանակության ճանապարհներ («Կյանքի ճանապարհ»-ի սկզբունքը), առաջարկում եմ այս խնդիրը նույնպես քննարկել եւ լուծում գտնել այս 1,5 կմ ճանապարհի համար եւս: Միաժամանակ հասկանում եմ, որ այս նամակում շարադրված առաջին հարցի պարզաբանումները (ՀՀ ներդնելիք 550 կմ համայնքային ճանապարհաշինության մանրամասները), կարող են սպառել խնդիրը:

4.

Հարցերը, որ ներկայացվում են ստորև, գուցե տեխնիկական սխալի արգասիք են, բայց նպատակահարմար գտա դրանք եւս ներկայացնել ձեզ:

ա) Այս նամակի առաջին աղյուսակի 66-րդ տողով պլանավորած է «Ողջի-Շաղիկ (4կմ,С)-Գառնառիճ (2կմ,С)-Ծաղկուտ (3կմ,С)-Չորակերտ (3կմ,С)-Արդենիս (6կմ,С)-Աղվորիկ (4կմ,С)-Թավշուտ (6կմ,С)-M1(1կմ,С)» 29 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածի շինարարություն: 2005 թվականի աշնանը ՀԱՀ-Հայաստան աշխատանքային թիմը, իմ խնդրանքին ի պատասխան, ինձ տրամադրեց ծրագրով ճանապարհաշինական նախնական պլանային քարտեզները, որոնցից քաղվածները ներկայացվում են այս նամակում: Շիրակի մարզի քարտեզում հիշատակվում են մի քանի զույգ ևույնանուն բնակավայրեր: Այսպես. 2 Ողջի, 2 Ոսկեհասկ, 2 Չարիշատ:



Ենթադրաբար, այդ զույգերից մեկը բուն համայնքն է, մյուսը՝ այդ համայնքների ամառանոցային բնակատեղին:

**Հարց.** վերոհիշյալ ճանապարհաշինական պլանում Ողջի-Շաղիկ 4 կմ երկարությամբ հատվածը (քարտեզում սեւով չի ընդգծված) արդյո՞ք Շաղիկ համայնքը նախատեսում է կապել ոչ թե բուն Ողջի համայնքին, այլ այդ համայնքի ամառանոցին: Եթե այդպես է, արժե թյուրիմացություններից խուսափելու համար պլանում եւ հետագա քարտեզներում հատուկ նշել, որ դա ամառանոցն է, եւ դա բուն Ողջի համայնքը չէ, որն իրականում Շաղիկից հեռու է մոտ 25 կմ:

ա). Նույն առաջին աղյուսակի 68-րդ տողով պլանավորած է կառուցել «Արեգնադեմ-Գյուլլիբուլաղ (ստորին քարտեզում՝ Աղբյուրակ) (7կմ,С)-Ողջի (5կմ,С)-Գյումրի (10կմ,С)» ճանապարհահատվածը: Դատելով քարտեզից, այստեղ հիշատակված Ողջին բուն համայնքն է: Աղյուսակային պլանի 84-րդ տողով նախատեսվում է նորոգել «Առափի-M7» 2 կմ ճանապարհը եւ 78-րդ տողով

պլանավորվում է նորոգել «Ոսկեհասկ-M7»: Համադրելով այս ամենը, ըստ աղյուսակային պլանի ստացվում է, որ նորոգվելու է «Ողջի-Գյումրի» այն ճանապարհը, որ շրջանցում է Հայկավան ու Առափի գյուղերը հյուսիսից ու արեւելքից, անցնում է Ախուրյանի ձախ ափով եւ միանում M-7 միջպետական ճանապարհին, եւ ոչ թե այն ճանապարհը, որ անցնում Հայկավան եւ Առափի գյուղերով՝ ինչպես սեւով նշված է քարտեզում:



Իմ այցելությունները այդ համայնքներ ցույց տվեցին, որ «Գյումրի-Առափի-Հայկավան-Ողջի-Գյումրի» եւ «M-7-Ոսկեհասկ-Հայկավան» ավտոճանապարհների բոլոր հատվածները համանման մաշվածություն ունեն: Աղյուսակային պլանով ստացվում է, որ Հայկավան համայնքից դեպի Ողջի, Ոսկեհասկ եւ Առափի ելնող 3 ճանապարհներից ոչ մեկը չի նորոգվելու ՀԱՀ-Հայաստան ծրագրով: Եւ, եթե դրանցից որեւէ մեկը չի նորոգվելու նաեւ ՀՀ ներդրման պլանով, կստացվի, որ կխախտվի ՀԱՀ-Հայաստան ծրագրի հիշատակված գերակա պայմանը, թե բոլոր համայնքները ծրագրի իրականացման արդյունքում պիտի առնվազն 1 բարեկարգ ավտոճանապարհային ելք ունենան դեպի միջպետական կամ հանրապետական նշանակության ճանապարհ: Առաջարկում եմ քննարկել այս խնդիրը եւս ու նախագծային պլանի մեջ «Ողջի-Գյումրի» նախատեսված 10 կմ ճանապարհահատվածի փոխարեն պլանավորել նորոգել «Ողջի-Հայկավան-Առափի» 8 կմ կամ «Ողջի-Հայկավան-Ոսկեհասկ» 9 կմ ավելի բանուկ ճանապարհահատվածները:

**5.**

Այստեղ ներկայացվող հարցերը մասնագիտական խոր մեկնաբանության կարիք ունեն, ինչի համար հայցում եմ ՊՈԱԿ մասնագետների օժանդակությունը:

5-րդ աղյուսակի առաջին 4 սյունյակների (A, B, C, D) տվյալները մեզ են տրամադրվել ՊՈԱԿ-ից: 5-րդ (E) սյունյակի տվյալները ես ստացել եմ հենվելով ՊՈԱԿ-ի տվյալների վրա: 5-րդ սյունակում արտացոլված է 1 կմ ճանապարհի նորոգման միջին գինը ըստ մարզերի (մարզում ճանապարհաշինական ծախսի եւ նորոգվելիք ճանապարհների երկարության քանորդը): Միաժամանակ հարկ է նշել, որ ըստ մեզ տրամադրված տեղեկությունների, չնչին բացառություններով, նորոգման համար պլանավորած ճանապարհահատվածները գնահատված են որպես C կարգի, այսինքն, դրանց նորոգման կարիքները համանման են:

**Աղյուսակ թիվ 5.**

<b>A</b>	<b>B</b>	<b>C</b>	<b>D</b>	<b>E</b>
<b>ՄԱՐԶԸ</b>	<b>Վերականգնվող ճանապարհների երկարությունը (ԿՄ)</b>	<b>Վերականգնման արժեքը մլն ԱՄՆ\$</b>	<b>Շահառու համայնքների թիվը</b>	<b>1 կմ շինարարություն միջին ծախսը ԱՄՆ\$/կմ</b>
ՎԱՅՈՑ ՁՈՐ	48	2.3	8	48750
ԼՈՌԻ	118	6.4	40	54322
ՍՅՈՒՆԻԲ	233	14.2	51	61073
ՏԱՎՈՒՇ	84	5.3	17	63095
ԿՈՏԱՅԸ	50	3.3	15	66800
ՇԻՐԱԿ	177	11.8	48	66384
ԱՐԱԳԱԾՈՏՆ	89	6.4	31	71798
ԳԵՂԱՐՔՈՒՆԻԲ	105	8.0	33	76000
ԱՐԱՐԱՏ	13	1.1	6	86923
ԱՐՄԱՎԻՐ	26	2.3	16	88846
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>943</b>	<b>61.2</b>	<b>265</b>	<b>64878</b>

Վերը բերված աղյուսակի տողերը դասավորված են 5-րդ սյունակում ստացված թվերի աճի կարգով: Ես խնդրում եմ ՊՈԱԿի մասնագետներին մեկնաբանել ինձ եւ հնարավոր է ՇԽ այլ անդամների համար. - Ինչո՞վ է պայմանավորված այն հանգամանքը, որ համեմատաբար հարթավայրային մարզերում 1կմ-ին ընկնող շինարարական միջին ծախսի ցուցանիշը անհամեմատ մեծ է, քան հիմնականում

լեռնային ռելիեֆով մարզերի համանման ցուցանիշը: Օրինակ. Վայոց Ձորի մարզում 1կմ նորոգելու համար միջին հաշվով նախատեսված է ծախսել 48,7 հազար դոլար, իսկ Արմավիրի մարզում 1 կմ ավտոճանապարհի նորոգելու համար՝ 88,8 հազար դոլար, ավելի քան 80 տոկոսով ավելի: Ինչո՞վ է սա բացատրվում: Իմ հասկանալով, բարդ ռելիեֆային պայմաններում ճանապարհաշինությունն ավելի թանկ արժե, քան պարզ ռելիեֆային պայմաններում: Դժբախտաբար, ըստ մարզերի, 1կմ նորոգման պլանավորած ծախսի այսօրինակ վայրիվերումները անհնար է բացատրել միջանցիկ համայնքների քանակով: Օրինակ. Լոռու մարզում նորոգվելիք ճանապարհները հաղորդակցում են 40 համայնք (ենթադրվող ենթակառուցվածքների շինարարությունը ներառյալ. համայնքներում՝ մայթեր եւ մայթեզրեր, ճանապարհային նշանների առատություն եւ այլն), բայց այստեղ 1կմ նորոգման միջին ծախսը կազմում է 54,3 հազար դոլար: Համանման պատկեր է նաեւ Սյունիքի մարզում. 51 համայնք հաղորդակցող ճանապարհների նորոգման միջին ծախսը 1կմ հաշվով կազմում է 61,07 հազար դոլար: Սրան ի հակադրություն Արմավիրի մարզում 16 համայնք հաղորդակցող ճանապարհների յուրաքանչյուր կիլոմետրը միջին հաշվով արժենալու է 88,8 հազար դոլար:

**Հարգելի պարոն Հովսեփյան,  
Շահառուների խորհրդի հարգելի անդամներ,**

**Ելնելով վերը նկարագրված մի շարք հարցերին պատասխան գտնելու  
անհրաժեշտությունից, առաջարկում եմ հանդիպել եւ քննարկել դրանք:**

8 մարտի, 2007

Հարգանք՝ ՀՄԸ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի անդամ,

ԺԱԱ խորհրդի նախագահ

Լեւոն Բարսեղյան 